**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի**

# ՈՐՈՇՈՒՄ

**1 Հուլիսի 2022, N 13 - 9**

**Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած, ուսման վարձը չվճարած, բանակ զորակոչվելու կապակցությամբ 2020-2021 ուսումնական տարում Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի «041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին (վճարովի հիմունքներով) կցագրված, ժամկետից շուտ զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած դիմորդ Կարեն Հարությունի Կարապետյանին 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրամանագրելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին**

**Լսելով և քննարկելով՝**

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության մրցույթով անցած, ուսման վարձը չվճարած, բանակ զորակոչվելու կապակցությամբ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2020 թվականի հոկտեմբերի 6-ի N ՈՒՄ /86/ 12-Ա հրամանով 2020-2021 ուսումնական տարում համալսարանի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի «041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի 1-ին կուրսին (վճարովի հիմունքներով) կցագրված, 2022 թվականի հունվարի 7-ին զորացրված և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242 - Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676 - Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ (20.05.2022) դիմած դիմորդ Կարեն Հարությունի Կարապետյանին 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրամանագրելու համար ուսման վարձը վճարելու թույլտվություն տալու մասին հարցը:

**Հիմք ընդունելով**, որ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի 2022 թվականի հունվարի 26-ի N 05/11.2/548-2022 գրությամբ առաջարկվել է ազգային բանակ զորակոչվելու կապակցությամբ ուսումնառությունը դադարեցրած, արցախյան 44-օրյա պատերազմին մասնակցած և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 17-ի N 1242-Ն հրամանով (խմբ. 17.12.2018 թ. N 1676-Ն) հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» 21-րդ կետով սահմանված ժամկետից ուշ դիմած ուսանողների ուսանողական իրավունքների վերականգնման հարցը քննարկել համալսարանի գիտական խորհրդի նիստում՝ հաշվի առնելով պատերազմի հետևանքով ստեղծված իրավիճակը (առողջական, հոգեբանական խնդիրներ, զինվորական կոմիսարիատներից զինվորական գրքույկների տրամադրման ուշացումներ և այլն), ինչպես նաև այն հանգամանքը, որ Կարեն Հարությունի Կարապետյանը սահմանված ժամկետում ուսման վարձը վճարելու թույլտվության և հրամանագրման համար չի դիմել համալսարան, քանի որ ունեցել է հոգեբանական խնդիրներ՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Կցագրված դիմորդ Կարեն Հարությունի Կարապետյանին** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի **«041401.01.6 Շուկայագիտություն (մարքեթինգ) (ըստ ոլորտի)»** մասնագիտության բակալավրիատի առկա ուսուցման համակարգի **1-ին** կուրսում **2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակից** հրամանագրելու համար **թույլատրել վճարել** 1-ին կուրսի 1-ին կիսամյակի ուսման վարձը:

2. Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա.Վ.Գրիգորյանին:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դիանա Գալոյան**

2022 թ. հուլիսի 1
Երևան